ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<15>> փետրվարի 2016 թվականի N: 28-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԹԻԿԻ, ԱԽՈՒՐՅԱՆԻ, ՄԱՐԱԼԻԿԻ, ԱՄԱՍԻԱՅԻ ԵՎ ԱՇՈՑՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի ԹԻՎ 35/1 Կ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի, 10-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2016 թվականի փետրվարի 5-ի <<Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելուն համաձայնություն տալու մասին>> N 59-Ա որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Արթիկի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետի (ծածկագիր՝ 67-2.3-29), գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 67-3.2-23), առաջատար մասնագետների (ծածկագիր՝ 67-4.1-24, 67-4.1-25), առաջին կարգի մասնագետների (ծածկագիր՝ 67-4.3-11, 67-4.3-12), երկրորդ կարգի մասնագետի (ծածկագիր՝ 67-4.3-30) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը՝ համաձայն NN 1-7 հավելվածների,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Ախուրյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետի (ծածկագիր՝ 67-2.3-30), գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 67-3.2-24), առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 67-4.1-26), առաջին կարգի մասնագետների (ծածկագիր՝ 67-4.3-13, 67-4.3-14), երկրորդ կարգի մասնագետի (ծածկագիր՝ 67-4.3-31) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը՝ համաձայն NN 8-13 հավելվածների,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Մարալիկի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետի (ծածկագիր՝ 67-2.3-31), գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 67-3.2-25), առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 67-4.1-27), առաջին կարգի մասնագետների (ծածկագիր՝ 67-4.3-15, 67-4.3-16), երկրորդ կարգի մասնագետի (ծածկագիր՝ 67-4.3-32) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը՝ համաձայն NN 14-19 հավելվածների,

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Ամասիայի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետի (ծածկագիր՝ 67-2.3-32), գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 67-3.2-26), առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 67-4.1-28), առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 67-4.3-17) քացիական ծառայության պաշտոնների անձնագրերը՝ համաձայն NN 20-23 հավելվածների,

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Աշոցքի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետի (ծածկագիր՝ 67-2.3-33), գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 67-3.2-27), առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 67-4.1-29), առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 67-4.3-19) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը՝ համաձայն NN 24-27 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2003 թվականի մարտի 20-ի <<ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին>> թիվ 35/1 Կ որոշման NN 56-60, 86-90, 118-123, 138-144, 155-157 հավելվածները:

Ֆ.ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է